



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Հեթանոսական գրական շարժումը՝ որպես ազգի
միասնության և վերագարթոնքի ճանապարհ

ԱՌԱՐԿԱ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Ծովինար Խաչատրյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Մարտունի գյուղի միջնակարգ
դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----	3
Հեթանոս աստվածներ-----	4
Հեթանոսական գրականության ձևավորումը և դրսևորումը հայ գրականության մեջ-----	5
Դ. Վարուժան-----	12
Միամանթո-----	15
Եզրակացություն-----	19
Օգտագործված գրականություն-----	20

Եղեգնյա գրքչով երգեցի փառքեր.
— Քեզի ընծա՛, իմ հայրենիք —
Սոսյաց անտառեն էի գայն կըտրեր...
— Քեզի ընծա՛, հին հայրենիք —
Եղեգնյա գրքչով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող լու՛յս ելաներ:

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Դարեր ի վեր Հայաստանը երթարկվել և ենթարկվում է տարբեր նվաճողների ասպատակությանը: Յուրաքանչյուր ումակ, արթնանալով քնից, փորձում է իր <<բաժին>>ը ստանալ՝ մեր հայրենիքից: Սկսած հին դարերից մինչև մեր օրերը հայ՝ կառչած իր փոքրիկ, քարքարոտ, բայց լեռների գրկում ծվարած հողից՝ փորձել և փորձում է ամուր ու անառիկ պահել մեր մի բուռ դարձած երկիրը: Զինվորների հետ այդ գործին են լծված մեր պատմիչներն ու գրողները: Ստեղծվեց հեթանոսական գրական շարժումը, որը հանդես եկավ ազգի միասնության և վերագարթոնքի գաղափարով: Աջակցություն և օժանդակություն չստանալով <<բարեկամներից>>՝ փորձում էին անցյալի հերոսական պատմությունների և հերոսների միջոցով ոգևորել հայ մարտիկներին պայքարելու հայրենիքի ազատության և անկախության համար:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Հեթանոս գրական շարժումը հայ գրականության մեջ հանդես եկավ քրիստոնեության ընդունումից հետո՝ համախմբելու և պայքարի մղելու մեր քաջերին: Ի տարբերություն քրիստոնյա աստծու՝ հեթանոս աստվածները բավականին հզոր էին և պատրաստ էին մարտնչելու հանուն հայրենիքի, հանուն ազատության, հանուն սերի: Ուսումնասիրության նպատակը հեթանոս գրական շարժման արդիականացում է ,

բացահայտել ուժի, գեղեցկության սահմանները, ցույց տալ հեթանոս աստվածների դերը անցյալի գրականության մեջ և արդի ժամանակներում:

Հեթանոս աստվածներ

Հայոց հեթանոս աստվածները նախաքրիստոնեական դարաշրջանի մեր նախնիների պաշտած դիցերն ու դիցուհիներն են: Հայոց հեթանոս աստվածների առաջին դիցարանը ձևավորվել է հայ ժողովրդի կազմավորմանը զուգընթաց՝ կրոնապաշտամունքային հավատալիքների (տոտեմիզմ, ոգեպաշտություն, բնապաշտություն, հմայական մոգություն) ազդեցությամբ:

Վանի թագավորության (Բիաինիլի, Ուրարտու, Արարատ) դիցարանը հիշատակվում է Մեծի դռան արձանագրության մեջ: Այն կազմված է եղել 70 աստվածությունից՝ 35 իգական և 35 արական (ամեն աստված ուներ իր նշանը), և շուրջ 100 սրբություններից: Դիցարանը գլխավորել է գերագույն եռյակը՝ Խալդի, Թեյշեբա, Շիվինի: Երկրպագել են նաև դաշտերի, լեռների, ծովերի և այլ աստվածությունների:

Հետբիաինական դարաշրջանում ազգակից աստվածներից ձևավորվել է նոր պանթեոն, որը նույնությամբ պահպանվել է մինչև քրիստոնեության ընդունումը:

Հայոց դիցարանի բնորոշ առանձնահատկությունը միակենտրոնությունն է, չկան չար կամ չարագործ աստվածներ, մեծարվել են լույսը, բարին, ընտանեկան օջախը, գիտությունները:

Հայոց դիցարանը ղեկավարում է գերագույն եռյակը՝ Արամազդը՝ աստվածների հայրը, երկնքի ու երկրի արարիչը, լիություն, բարություն և արիություն պարգևող Անահիտը՝ արգասավորության, պտղաբերության մայր դիցուհին, Վահագնը՝ պատերազմի, քաջության և հաղթանակի աստվածը: Գլխավոր աստվածություններից է Աստղիկը՝ սիրո և գեղեցկության, երկնային լույսի և ջրի դիցուհին:

Հայոց դիցարանի ազդեցիկ դիցուհիներից է Արամազդի դուստրը՝ Նանեն՝ ընտանիքի պահապանը, իմաստության, ողջախոհության և ռազմի աստվածուհին: Նանեի պաշտամունքը սերտորեն կապված էր Անահիտի պաշտամունքի հետ:

Արեգակի, կրակի ու լուսի, մաքրության ու ճշմարտության աստվածը Արեգ-Միհրն է: Ըստ հայոց հին հավատքի՝ Արեգակի սրտում ապրում են 365 սրբեր, որոնցից յուրաքանչյուրը տարվա 1 օրվա տերն է. վկայակոչվում են չարը խափանելու նպատակով: Դպրության, պերճախոսության, գիտությունների և ուսման, արվեստների հովանավոր աստվածը Տիրն է՝ Արամազդի աստենադպիրն ու սուրհանդակը: Համարվել է մարդկանց ճակատագրերի գուշակն ու երագների մեկնիչը, նրանց չար ու բարի գործերի գրառողը:

Վանաստուրը հին հայերի դիցարանում հյուրընկալության աստվածն է՝ պանդուխտների, օտար ճամփորդների հովանավորը, նրանց ապաստան ու օթևան տվողը: Վանաստուրի տոնը նշել են հին հայոց տարեգլխի՝ Ամանորի առաջին օրը, որի համար հաճախ նրան անվանել են նաև Ամանորի դից, նույնացրել՝ Նոր տարին անձնավորող Ամանոր աստծու հետ:

Հայկական դիցարանում անդրաշխարհի աստվածը Սպանդարամետն է, պաշտվել են նաև Անգեղ (Ներգալ), Դեմետր, Գիսանե, Բարշամ և այլ աստվածություններ:

Հելլենական մշակույթի տարածումից հետո հայ հեթանոս աստվածները նույնացվել են հունական համապատասխան աստվածների հետ՝ Արամազդը՝ Զևսի, Անահիտը՝ Արտեմիսի, Միհրը՝ Հելիոսի, Վահագնը՝ Հերակլեսի, Տիրը՝ Ապոլլոնի (նաև Հերմեսի), Աստղիկը՝ Աֆրոդիտեի, Նանեն՝ Աթենասի, և այլն՝ պահպանելով, սակայն, իրենց ազգային, պաշտամունքային ինքնատիպ հատկանիշները: Հեթանոս հայերն իրենց աստվածներին նվիրել են հատուկ տոներ, նրանց համար կառուցել տաճարներ, մեհյաններ, նվիրատվություններ արել, կենդանիներ զոհաբերել: Նրանց անուններով են կոչել հայ հեթանոսական տոմարի ամիսները, օրերը, տեղանուններ, անձնանուններ և այլն:

Հեթանոսական գրականության ձևավորումը և դրսևորումը հայ գրականության մեջ

19-րդ դարի վերջերին ֆրանսիական գրականությունում ձևավորվեց մի նոր գրական շարժում՝ իբրև մարդկային իդեալ, գեղարվեստական ըմբռնում և անցյալի փառաբանում: Գրականագիտությունն այն անվանեց <<Նոր հեթանոսություն>>, որի

տեսական դրսևորումը դարձավ <<Ակադեմոս>> ամսագիրը, որտեղ Ռոժե Շարպոնելը իր <<Հեթանոսության վերադարձը>> հոդվածում հեթանոսությունը սահմանում է իբրև բոլոր սարսուռների գեղեցիկ ու նկարչագեղ արտահայտություն, խտացված այլաբանություն, ուր զարգանում է աստվածային բնապաշտությունը:

Իրականությունը բանտ է, որտեղ մարդը պարուրված է առօրյա հոգսերով,որի ճահճում են թաղվել միտքն ու երևակայությունը, իսկ դրանից ազատվելու համար անհրաժեշտ էր ընդվզում: Իրականության մեջ տիրող բարքերն էին մարդուն ստիպում հետ նայել անցյալ, երբ մարդկանց մեջ գերիշխում էր սերը, գեղեցկությունը և մարդկային պարզ հարաբերությունները: Այսպիսով, երգը հնչում է ներկայից դեպի անցյալ, հին աստվածների այդ երգը աշխարհիկ կյանքի պայքարն է, վերագնահատումը, որ արմատներով ձգվում է մինչև հին դարեր՝ դեպի անցյալի հերոսական պատմություն: Հեթանոս թեմայով ժողովրդական, աշխարհիկ կյանքի ու պայքարի ազատ տարերքն է բերվում գրականություն: Հարկադրվելով ժամանակակից մարդու փոքրությանը՝ փառաբանվում էին լիարժեք կյանքը, առողջ ու գեղեցիկ մարմինը, հզոր ու անկեղծ մարդը,ազակ կամքը, գեղեցիկն ու ուժը:Նոր ժամանակները փոխեցին մարդու էությունը՝ նրան դարձնելով կենսամերժ, գունատ, սգեղացրին մարմինը, հեռացրին բնությունից և բանականության առողջ ու գեղեցիկ ձևերից:

Ի տարբերություն քրիստոնեական կեղծ բարեպաշտության՝ բանաստեղծականորեն ներկայացվեց կնոջ մերկ մարմնի գեղեցկությունը, մատնանշվեց ուժը թուլության փոխարեն,ցավի ու զղջման տեղ՝ հաճույքը, մահի դեմ՝ կյանքը: Ժամանակը պահանջում էր աճ, բարգավաճում,որտեղից էլ առաջ եկավ ոչ միայն հին աստվածների գովքը, այլև կնոջ պաշտամունքը: Մի կողմից, կինն ընդունվում է իբրև հաճույքի, ուրախության աղբյուր, իբրև գեղեցկություն, արվեստ, իբրև ծնունդ և պատճառ ամեն տեսակ հաճույքների, նա ծախու իր չէ, այլ հաղթության պսակ, երբ սերն ու գեղեցկությունը գնահատվում է ըստ արժանվույն,մյուս կողմից, առկա է կնոջ պաշտամունքը իբրև կյանքի, հղացման աղբյուր, իբրև մայրության խորհրդանիշ:

Այսպիսով,հակվելով հեթանոս դարերին՝ փորձ է արվում անցյալի գեղեցկությանը նոր ձև և կերպարանք տալ,համատարած ցավի ծանր ապրումներից հետո

հաղորդակից լինել նաև հաճույքին, թշվառ վիճակից հետո բարձրանալ Ձորավոր, Մաքուր հայրենի հողի վրա:

Առաջին աշխարհամարտին նախորդող տարիներին, երբ Թուրքիայում իշխանության գլուխ էին անցել երիտթուրքերը, նրանց սահմանադրությունից ոգևորված արևմտահայությունը հավատաց իր ազգային ազատության դարավոր երազների իրականացմանը, հավատաց Գեղեցիկի ամենագոր ուժին և ազգերի միասնության գալիքին, սեփական կյանքի գնով վճարեց իր վստահության համար: Արևմտահայ մտավորականությունը մեծ ակնկալիքով ու հավատով լծվեց իր գործին, ձուլվել ժողովրդի էությանը, ապրել ու զգալ ժողովրդի հոգսերով, արտահայտել թուրքական լծի տակ լռության դատապարտած երազանքները:

Արևմտահայ իրականության մեջ այս հիմքի վրա տարածվում է բանաստեղծական հեթանոսական գրական շարժումը, որն արտահայտում էր հայ ժողովրդի պատմության հեթանոս ժամանակները, Ուժի, Գեղեցկության պաշտամունքի փառաբանումը: Պատմության այս շրջանն արտացոլված է Դ. Վարուժանի, Լ. Շանթի, Սիամանթոյի, Ռ. Զարդարյանի, Ահարոնի, Գասպարյանի, Հ. Սուրենյանի, Լ. Էսաճանյանի ստեղծագործություններում: Դ. Վարուժանի համար հեթանոսականը հերոսականն է, որը միակ զենքն է քաղաքական և սոցիալական թշվառությունների դիմակայելու համար, եթե հային չլքեր հեթանոս ոգին:

<<Հեթանոս>> գրական շարժումը ազդարարող երկերը՝ Դ. Վարուժանի <<Հեթանոս երգերը >> և Լ. Շանթի <<Հին աստվածներ>> դրաման աշխուժություն բերեցին արևմտահայ գրական կյանք, նպաստեցին ազգային-հոգևոր վերելքին: Լ. Շանթի <<Հին աստվածներ>> դրաման փորձել են քննել հեթանոսական գրական շարժման սահմաններում: Սակայն պետք է նշել, որ այն քննությունը << չի հաղթահարում >>, մինչդեռ որոշ գրականագետներ գտնում են, որ դրաման <<հեթանոսավառ>> է և դնում են Դ. Վարուժանի <<Հեթանոս երգեր>>ի կողքին: Ըստ գրականագետ Ս. Փանոսյանի՝ <<Հին աստվածները>> խորհրդանշում են նախաստեղծ ազատություններն ու վայելքները, անկաշկանդ ու նախապաշարմունք կյանքը, և այդ առումով նրանք ներկայացնում են հակամարտող, փոխբացառող կողմերից մեկը¹: Դրամայում երկու

ժամանակաշրջանների՝ հեթանոսականի և քրիստոնեականի հակամարտությունն է՝ առաջինի փառաբանմամբ:

Կազմակերպվեցին Գրական ասուլիսներ, որոնք, ի վերջո, հանգեցրին <<Նավասարդ >> տարեգրքի՝ խմբագիրներ՝ Հ. Սիրունի և Դ. Վարուժան, և ապա <<Մեհյան>> հանդեսի յոթ համարների տպագրությանը: Գրական ասուլիսները, <<Հեթանոս երգերը>>, <<Հին աստվածները>>, <<Նավասարդ>> տարեգրքի միակ օրինակը, << Մեհյան>> հանդեսը տոգորված էին հեթանոսական մտայնությամբ: Ստեղծված գրականությունը ավանդականի և եվրոպական գրականության յուրօրինակ միավորման փորձ էր:

Հեթանոս հոսանքի սկզբնավորումը կապվում է նաև Սիամանթոյի ստեղծագործության հատկապես այն շրջանի հետ, երբ ծանոթանում է փարիզյան միջավայրի հետ: Նրա հայացքները դրսևորվում են Ա. Չոպանյանի <<Անահիտ>> հանդեսում 1897թ. հրատարակած <<Փարիզյան նոթեր>> երեք արձակ բանաստեղծություններում, ապա առաջին ժողովածուում՝ <<Դյուցազնորենում>>, ապա նաև հետագա գործերում: Նա առաջադրում էր ազգային ազատագրական պայքարի, խիզախության, ուժի ծրագիրը, բայց չէր մերժում նաև <<ցավի ծրագիրը>>:

Չարի հանդեպ ատելությամբ ու պայքարի վճռականությամբ են պայմանավորված Սիամանթոյի երգերի << հեթանոս>> ոգին: 1901-08թթ. Սիամանթոն լույս ընծայեց հայոց տառապանքը, ըմբոստությունը և պայքարը ոգեկոչող հինգ ժողովածու: Առաջինը <<Դյուցազնորեն>> էր, որտեղ հայրենիքի տառապանքից բացի երգեց հայերենիքի ըմբոստացող ոգին, հերոս հայորդիներին որոնք հանուն հայրենիքի կռվում են և հաղթում: Այս ամենն ամփոփվեց <<Հայորդիներ>> շարքում, իսկ հայրենիքի թշվառ պատկերները ներկայացրեց <<Հոգեվարքի և հույսի ջահեր>>, ապա <<Կարմիր լուրեր բարեկամես >> ժողովածուներում: Ըմբոստության, պայքարի երգով Սիամանթոն հայրենասիրական երգի նոր որակ բերեց հայ գրականության մեջ: Նրա հերոսը՝ գեղեցկադեմ հայորդին, պատգամում է <<Ցեղին ցավը և ցեղին ուժը բանաստեղծել>>:

Եվ դուն սա մաքրափայլ թերթերուդ վրան, ցեղին ցավը և ցեղին ուժը բանաստեղծե,

Ապագա սերունդներուն և մեր անցյալին տխրությանն ի նվեր.

Ես որք մըն եմ և ըմբոստ մը, մնաս բարյավ, կորուսյալներս փնտրելու կ'երթամ...

Քու երգերեդ երգ մը տուր ինձ,երգ մը, ես երգելով կ'ուզեմ մեռնիլ'...

Հայրենիքի ցավի ու տառապանքի փոխարեն Սիամանթոն առաջ է մղում երգ, որը ծանր տառապանքից ծնված պայքարի, վրեժի և ըմբոստության երգ էր: Ըստ էության, Սիամանթոն այսպես փորձում էր արթնացնել պայքարի, ըմբոստության և վրեժխնդրության ոգին: Նրա հերոսները՝ իրենց լուսավոր կերպարներով, հավատ են ներշնչում սեփական ուժի ու հաղթանակի նկատմամբ:

Սիամանթոյի բանաստեղծությունների անմիջական ազդեցությամբ Դ. Վարուժանը, որը Գենտի համալսարանի ուսանող էր, սկիզբ դրեց իր հայրենասիրական երգին: <<Ջարդը>> բանաստեղծության և ապա <<Ցեղին սիրտը>> ժողովածուի մեջ ցեղի ցավը և ցեղի ուժը ներկայացնելու սկզբունքով ներկայացվեց ժողովրդական կյանքի հուզումների պատկերը: Վարուժանը բերում էր տառապանքի ու ընդվզման երգը՝ հաղթանակի աներկբա հավատով. հավատ <<արշալույսի մը>>, մարդկանց և հայրենիքի նկատմամբ: Ավերակված երկրի ու մորթվող հայրենակիցների պատկերները Վարուժանը ողորդում է սիրո տաք շողերով, հայրենիքի ըմբոստ զավակների, ազատության համար պայքարի ելած մարտիկներին ներկայացնում է լուսապսակով, հնչեցնում ազգային և մարդկային արժանապատվության պատգամները:

<<Հեթանոս>> թեմատիկան և համանուն գրական շարժումը կապվում էր արևմուտքի հետ, դիտարկվեց նոր հայացքով: Սա հիմնականում գնահատվում էր որպես ազգային-հոգևոր զարգացման առանձնահատուկ դրսևորում, ազգային խոր հիմքեր ունեցող նշանակալից երևույթ: Այս առումով, Սիամանթոյի և Վարուժանի <<հեթանոսությունը>> կապվում էր ոչ միայն օրվա խնդիրներին, այլև ժողովրդի գալիքի փիլիսոփայություն:

Ուսումնասիրողներից շատերը <<հեթանոս շարժումը>> գնահատում են կամ ինքն իրենով կամ եվրոպական գրական առնչությունների ոլորտում:

Հեթանոս ոգու մեծարումը հայ հոգևոր տարեգրության և հայ գրականության մեջ խոր հիմքեր ունի: Հայ դիցաբանությունը, բանավոր գրականության պատառիկները

բացահայտում են մեր դարավոր գրականության էությունը: Ինչպիսին էր այդ գրականությունը՝ հզոր, սիրավառ ու պայքարող, ինչպես մեր հին աստվածները: Դրանում համոզվելու համար անհրաժեշտ է ընթերցել Վահագն աստծու ծնունդը պատկերող հատվածը.

Երկներ երկին, երկներ երկիր,

Երկներ եւ ծովն ծիրանի.

Երկն ի ծովուն ուներ եւ զկարմրիկն եղեգնիկ:

Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ,

Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ.

Եւ ի բոցոյն վազեր խարտեաշ պատանեկիկ:

Նա հուր հեր ուներ,

Բո՛ց ուներ մօրուս,

Եվ աչկունքն էին արեգակունք:

Կենսալիր ու շքեղ է եղել մեր հին գրականությունը և հակառակ քրիստոնյա հոգևորականների արգելքի՝ միշտ գովերգվել և փառաբանվել են հին աստվածները: 5-րդ դարի պատմիչ Փ. Բուզանդը վկայում է, որ մեկ հարյուրամյակից ավել քրիստոնեություն ընդունած ազգի մոտ բացակայում էր ճշմարիտ քրիստոնյայի վարքը: Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ մեր հին և միջնադարյան գրականության մեջ գերիշխում են հեթանոսության տարրերը, որով պայմանավորված մեր մեծերը ստեղծեցին համաշխարհային գրականությանը հավասար գործեր: Քերթողահայր Խորենացին ոչ միայն օգտվեց հեթանոսական գրականությունից, այլև ինքը գրականության մեջ ներմուծեց հեթանոսության տարրեր/օր.՝ Երվանդակերտ դաստակերտի կառուցումը, հայ թագավորների հիշատակումը/:

Որոշ գրականագետների կարծիքով՝ հեթանոսականությունը իր արտացոլումն է գտել միջնադարի հանճարեղ քնարերգու Գր. Նարեկացու տաղերում և <<Մատյան ողբերգության>> պոեմում՝ գովելով մարդու, բնության գեղեցկուէյան և հոգու ներդաշնակությունը: Այս շրջանում ժողովուրդը ,ազատագրվելով արաբական տիրապետության լծից, ի մի բերեց իր հիշողության ծալքերում մնացած հեթանոս հավատալիքներն ու հերոսապատումները, տարրալուծելով տեղի ունեցած թարմ

իրադարձությունների հետ, ստեղծեց մի ոգեշունչ պատմություն, որն ամբողջությամբ շնչում է հեթանոս աշխարհընկալումով, որը երևում է բոլոր հարցերում՝ կնոջ, սիրո, բնության, քաջության և այլն:

Խորենացուց, Նարեկացուց և մյուսներից հետո Աբովյանը առաջ քաշեց հայ երիտասարդությանը այլ ոգով դաստիարակելու, հայ ժողովրդի հոգևոր վերածննդի խնդիրը:

Աբովյանի << հեթանոս >> ոգու մարմնացումն է <<Վերք Հայաստանի>> վեպը, որում Աբովյանը հակադրվում է հայի բնավորության մեջ արմատացած խոնարհությանն ու հանդուրժողականությանը: Վեպով Աբովյանը պայքարի է մղում հային և յուրովի պատերազմ հայտարարում օտար լծի և կրոնական քարոզի բերած խեղճությանն ու հնազանդության վարքին: Մեծ հայրենասերը ձգտում էր ժողովրդին վերադարձնել կորցրած հեթանոսական ավյունն ու դուրսագնական ոգին: Ազգային-ազատագրական պայքարի իր ծրագրային երկերում Բաֆֆին նույնպես հակադրվում էր եկեղեցական ստրկամիտ դաստիարակության վերացմանը, գտնում էր, որ պետք է արթնացնել հայ մարդու միտքն ու սիրտը: Մարդկանց հոգեբանության վրա ներգործելու միջոց է դառնում <<հեթանոս մեծության>> գեղագիտական երազ- իդեալը, որով և առաջնորդվում են Բաֆֆու դրական հերոսները: << Սամվել >> վեպում ուղղակիորեն քննադատվում է << հայոց դարձը >>, Հայաստանի կյանքում քրիստոնեության դերը համարում բացասական: Վեպի երիտասարդ հերոսներից մեկը՝ Մեսրոպ Մաշտոցը, բարձր գնահատելով ազգային ինքնուրույն հոգևոր կյանքի նշանակությունը, ասում է. <<Մենք արհամարհեցինք ինչ որ հին էր, ինչ որ հեթանոսական էր: Մեր երգիչների, մեր վիպասանների գեղեցիկ վաստակները կրակի զոհ դարձրինք: Մենք թողեցինք մեր նախնականը, մեր ազգայինը և սկսեցինք օտարինը սիրել >>:³

Աբովյանի և Բաֆֆու գիտակցության մեջ հասարակ ժողովրդի համար ազգային եկեղեցին այն խարիսխն է, որը նրան կապել է ազգային գիտակցությանը, սեփական լեզվին, հող ու ջրին, պահպանել նրա էթնիկ ինքնությունը: Բայց ժամանակի ավերիչ կամքով դեպի վատթարն է ընթացել, եկեղեցու սպասավորներից քչերն են հավատարիմ մնացել իրենց կոչմանը: Մեր մտավորականության ներկայացուցիչները չէին կարող հավատալ կրոնի պարզունակ հորինվածքներին, բայց նրանք երազել են

իր կոչմանը ծառայող եկեղեցի և հավատավոր գիտակից եկեղեցական ունենալու մասին:

Րաֆֆին և Աբովյանը ստեղծեցին հայ մարդու իդեալ, որը դաստիարակչական նշանակություն ունեցավ ծավալված ազգային ազատագրական պայքարի ձևավորման և կազմակերպման գործում: Հակադրվելով քրիստոնեական հնազանդության գաղափարաբախտությանը՝ Րաֆֆու հերոսները գտնում էին, որ միայն պայքարի միջոցով ազգը կարող է հասնել ազատության, ունենալ ազատ և անկախ հայրենիք, որտեղ մարդը հանգիստ կարող է վայելել այն ամենը, ինչը ստեղծել է արդար քրտինքով:

Այս ամենը հող նախապատրաստեց Դ. Վարուժանի և Միամանթոյի ստեղծագործություններին՝ «Հայորդիներ», «Հեթանոս երգեր», «Ցեղին սիրտ»:

Դանիել Վարուժան: Դանիել Վարուժանը (Դանիել Չպուգբյարյան) ծնվել է 1884 թվականին, Արևմտյան Հայաստանի Սեբաստիա նահանգի Բրզնիկ գյուղում: Նա մեծացել է գեղեցիկ բնության մեջ, իրենց գյուղի գետեզերքներին թախծող ուռիների օրորի տակ: Գիշերները մայրը որդուն պատմել է պանդխտության մեջ գտնվող հորից և նրա երևակայությունը բորբոքել թուրք ենիչերիների մասին արած պատմություններով: Բնությունից ստացած երազային տպավորություններին խառնվել են կյանքի վշտերը: Վարուժանը գրաճանաչ է դառնում գյուղի վարժարանում, իսկ 1896 թվականից ուսումը շարունակում է Պոլսում սկզբում Սազըզ Աղաջիի Մխիթարյան դպրոցում, ապա Քաղկեդոնի վարժարանում: Պոլիսը երեխայի վրա ծանր տպավորություն է թողնում: Նա տեսնում է սուլթան Համիդի կազմակերպած ջարդի հետքերը: Այդ օրերի հալածյալներից էր նաև բանաստեղծի հայրը, որին հարազատները երկար ժամանակ որոնում և վերջապես գտնում են բանտում՝ շղթաների մեջ: Տարիներ անց, «Հորս բանտին մեջ» ոտանավորում, Վարուժանը հիշում է՝

Դեռ փոքր էի, եկա քեզի մենավոր,

Մութ զընդանիդ մեջ այցի,

Մայրս հիվանդ էր, կը շրջեի ես ազատ

Մեջտեղը բանտի եւ մահճի:

1902 թվականին Վարուժանը տեղափոխվում է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան դպրոցը: Բանաստեղծին գերում են Վերածնության շրջանի նկարչության ու քանդակագործության կոթողները իրենց առողջ և հյուսթեղ ռեալիզմով: Նա համալսարանում ընթերցում է նշանավոր գրողների երկերը, հատկապես տարվում է ռուս հանճարեղ գրող Լև Տոլստոյի և ֆրանսիացի մեծ մտածող Ժան-ժակ Ռուսոյի գաղափարներով:

Վարուժանն առանձին սիրով ուսումնասիրում է Հայաստանի պատմությունը, հայ հին ու նոր գրականությունը: Վենետիկում էլ նա գրում է առաջին բանաստեղծությունները՝ պանդուխտների կյանքի և 1896 թ. ջարդերի թեմաներով:

1905 թվականին բանաստեղծը մեկնում է Բելգիա և ընդունվում Գենտի համալսարանը: Ուսանողական տարիները էական դեր են խաղում. նա սովորում է հասարակական և քաղաքական գիտություններ, ուսումնասիրում գրականություն և սոցիալական ուսմունքներ:

Ստանալով բարձրագույն կրթություն, բանաստեղծը 1909-ին վերադառնում է ծննդավայր: Երկու տարի ուսուցչություն է անում Սեբաստիայի Արամյան վարժարանում, ապա 1911-ին տեղափոխվում Եվդոկիայի (Թոքատի) ազգային ճեմարան: 1912-ին Վարուժանը հրավիրվում է Պոլսի Բերայի վարժարան՝ տեսչի պաշտոնով:

Այս տարիներին Վարուժանի բանաստեղծությունները լայն ճանաչման են արժանանում: Նա դառնում է Պոլսի գրական շրջանների ազդեցիկ դեմքերից մեկը, գրական հավաքույթների ոգին: Տասը տարվա ընթացքում բանաստեղծը գրում է չորս գիրք՝ «Սարսուռներ», «Ցեղին սիրտը», «Հեթանոս երգեր» և «Հացին երգը»: Գրում է նաև նոթեր, հոդվածներ, կատարում է թարգմանություններ:

1915 թվականն էր: Վարուժանը շարունակում էր լրացնել գյուղի չքնաղ երգերի՝ «Հացին երգի» շարքը, պատրաստվում էր գրել «Հայկական հումերագիրք» ժողովածուն, ուր պետք է տեղավորեր հին հայկական առասպելների ու ավանդությունների մշակումները, երազում էր ամբողջովին մշակել «Սասնա ծռեր» ժողովրդական էպոսը:

Բայց վրա հասավ արյունալի աղետը: Արտերը ներկվում էին արյունով: Բանաստեղծի խոսքերով ասած կյանքը մորթվում էր արտերի մեջ, միտքը՝ գանգի մեջ: Այս ողբերգական օրերի գոհերից մեկը եղավ Վարուժանը: Թուրք մարդասպանները արքայի ճանապարհին, Չանղըրի քաղաքի մոտ մի ձորում հռչակեցին 31-ամյա բանաստեղծին:

Վայելելով հանրության, մշակութային գործիչների սերն ու հարգանքը՝ Վարուժանը և Հ. Միրունին կազմակերպում են գրական ասուլիսներ և նախաձեռնում, կազմում և խմբագրում «Նավասարդ» տարեգիրքը, որը պետք է մի բերեր դարասկզբի արևմտահայ մտավորականության բոլոր ստեղծագործությունները: Յուրաքանչյուր ստեղծագործող իր ուժերի ներածին չափով պետք է նպաստեր հայրենիքի նոր Արշալույսը կերտելու գործին.

Զի մենք, հանուն Սերին, Սերմին, քու հին Ցեղիդ Մարմարեն կույս,

Մենք, Զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք Նոր Արշալույս:

Տարեգիրքը, իր նյութով գաղափարներով ավանդական լինելով, միանգամայն նորություն էր հանրային և հոգևոր կյանքի պահանջների տեսակետից: Գրական հեթանոսությունը, որը հիմնավոր ընդհանրություններ ուներ ավանդականի հետ, դրսևորվեց իբրև կոնկրետ հանգամանքներից թելադրվող ազգային վերածննդի, պայքարի գաղափար: «Նավասարդ» տարեգիրքը կազմված էր 3 մասից՝ «Գրականություն», «Գրաքննադատություն», «Գեղարվեստ»: Առաջին մասն ամփոփում էր արևմտահայ գրականության հայտնի և ճանաչում ձեռք բերող հեղինակների ստեղծագործություններից՝ Դ. Վարուժան, Սիամանթո, Ռ. Զարդարիան, Սիպիլ, Վ. Թեքեյան, Երուխան, Ե. Օտյան, Շ. Միսաքյան, Հակոբ Օշական և ուրիշներ:

Տարեգիրքը բնութագրող առաջին նյութը Սիամանթոյի «Նավասարդյան աղոթքն» է, որտեղ ընդգծվում է բանաստեղծի ազատատենչ ոգին, ըմբոստությունը ազատության տանող ճանապարհի խոչընդոտների դեմ:

«Նավասարդ»-ի նյութերը անցյալի հետ ունեցած կապի տեսանկյունից դիտարկելով՝ տեսնում ենք, ոչ թե անցյալի իդեալականացում, այլ դարերի դաժան տառապանքների

միջով անցած և պատմության նոր դարաշրջան թևակոխած ժողովրդին ազատ կյանքի իդեալներով ոգևորելու մտայնություն: Դրված էր հայ ժողովրդի համար արդիական հարց. իր ճակատագիրը տնօրինելու և իր իրավունքը պաշտպանելու հարցը: Ամսագիրում զետեղված ստեղծագործությունները անցյալը ներկայացնելով համախմբվելու, պայքարի և սեփական իրավունքները պաշտպանելու յուրօրինակ կոչ էին:

1914թ. հունվարին տպագրվում է արևմտահայ վերջին պարբերականը՝ «Մեհյանը», որը ստորագրել էին Վարուժանը, Կ. Ջարյանը, Հ. Օշականը, Ահարոնը և Գ.Բարսեղյանը: «Մեհյան»ում Վարուժանը ժողովրդին ներկայացավ իբրև Գեղեցիկին նվիրյալ գրական նոր սերնդի առաջնորդ: Անտեսելով երիտթուրքերի մշակած արևմտահայությանը բնաջնջելու մահաբեր շունչը՝ կյանք էին տալիս Գեղեցիկի նոր մեհյանի՝ դրա մեջ տեսնելով ազգի փրկությունը: «Մեհյանը» սկսվում է հանգանակով, որը արևմտահայ գրականության զարգացման համար կայուն, ընդհանրական պահանջներ էր առաջադրում: Հանգանակի առաջին պահանջի մեջ խտանում էր ինքնարտահայտման և ինքնաճանաչման պահանջը՝ «պաշտամունք և արտահայտություն հայ հոգվոյն» : Հաջորդ պահանջով առաջադրվում էր, ինքնատիպ, միօրինակությունից և կաղապարային մտածողությունից հեռու արվեստ՝ «ինքնուրույնություն և անձնականություն ձևի մեջ»: Երրորդով դրվում էր լեզվի հարցը՝ «մեր լեզվին կատարելագործման իդեալը: Մեհենականները լեզվի հնարա-վորությունները տեսնում էին գրական լեզուն գրաբարով և բարբառներով հարստացնելու, հզկելու և ճոխացնելու մեջ: Հայտնի է, որ հայ ժողովրդի կյանքում հոգևոր մշակույթը եղել է պայքարի զենք, ունեցել պայքարող բնույթ, ազգային կյանքի կազմակերպման միջոց, որը բնորոշ է եղել նաև նոր ժամանակներում: Այդ պատճառով դրվեց նաև վերջին պահանջը՝ «Զուտ գրականությունը հեռու պահել քաղաքականութենե և լրագրութենե»:

Այնուամենայնիվ, «Մեհյան»ի օգոստոսյան համարը լույս չտեսավ. . .

Միամանթո: Միամանթոն (*Ատոմ Յարճանյան*) ծնվել է Ակնում՝ 1878թ. օգոստոսի 15-ին: Նախնական կրթությունն ստացել է տեղի վարժարանում, ապա ընտանիքի հետ տեղափոխվել է Կոնստանդնուպոլիս: 1896 թվականի ջարդերի ժամանակ 18

տարեկան պատանին, հորեղբոր հետ մեկնում է Եգիպտոս: 1897թ. անցնում է Եվրոպա, հոր խորհրդով ընդունվում Ժնևի քոլեջի ծաղկաբուծական բաժինը:

Օտարության մեջ շատ ծանր է եղել երիտասարդ բանաստեղծի կյանքը: Նյութական զրկանքները, հարազատների և հողի կարոտը, երկրից եկած սարսափելի լուրերը խոր կնիք են դնում զգայուն հոգու վրա, որոշելով նրա գրական հետագա ուղին:

Արտասահմանում լույս են տեսնում Միամանթոյի ժողովածուները՝ «Դյուցազնորեն», «Հայորդիներ», «Հոգեվարքի և հույսի ջահեր» խորագրերով: Այդ գրքերը նվիրված են բացառապես հայ ժողովրդի ողբերգությանը:

Հարուստ երևակայության և նուրբ զգացումների տեր բանաստեղծը երգում է հայրենիքի զավակների արյունոտ ճակատագիրը, ստեղծում ցնցող տրամադրությունների մթնոլորտ: Նրա էությունը հասկանալու համար շատ բնորոշ է «Արցունքներս» բանաստեղծությունը: Բանաստեղծները ծնվում են՝ երգելու կյանքի գեղեցկությունները, հայրենական հողի և բնության քնքշանքները, ապրելու պայծառ երազներով:

Եվ մաքրաթև երազիս հետ մինակ էի, հովիտներուն մեջ հայրենի,
Քայլերս էին թեթև, ինչպես քայլերը խարտիշագեղ եղնիկին:

Եվ զվարթությամբ կը վազեի, կապույտեն և օրերեն բոլորովին գինով,
Աչքերս ոսկիով ու հույսով՝ և հոգիս աստվածներով լեցուն...

... Կերգեի... Ադամանդյա տովակն ու թռչուններն հայրենագեղ,
Աստվածային աղբյուրներուն հստակահոս մեղեդիներն անդադրում,

Եվ առավոտյան զեփյուռը, քրոջական գորովներու այնչափ նման,
Այս բոլորն իմ երջանիկ երգերուս թոթովումին կը ձայնակցեին...

Այս գիշեր երազիս մեջ ձեռքս առի զքեզ, ո՛վ քաղցրախոս Սրինգ,
Շրթունքներս զքեզ ճանչցան՝ ինչպես համբույր մը հին օրերու,
Բայց շունչս հիշատակներու զարթնումեն, հանկարծորեն մեռավ:

Եվ երգիս տեղ՝ շիթ առ շիթ, շիթ առ շիթ արցունքներս էին, որ ինկան վար...

Մի շարք բանաստեղծություններում Միամանթոն կրկին խոսում է հայ բանաստեղծի հոգեկան դրամայից, որ ծագում է հայրենիքի ծանր բախտի պատճառով: «Արյուն է, որ կը տեսնեմ», – գրում է բանաստեղծը: Միամանթոն պատկերում է չարչարանքի

երագներ, ավերումի գիշերներ, մահվան և կոտորածի ցնցող տեսիլներ, դառնալով հայկական ողբերգության ամենախոշոր երգիչը:

Գիշերեն մեջեն արյուններուն ալիքը կը բարձրանա

Սառերուն հետ շատրվաններ ուրվագծելով,

Եվ ամեն կողմէ սոսկումով կը սուրան հալածված՝

Նախիրները հրդեհվող ցորյաններուն մեջեն...

Փողոցներուն մեջ մորթված սերունդներ կը տեսնեմ,

Եվ ամբոխներ անպատմելի սիրածութենէ դարձող,

Արևադարձային տաքություն մը կը բարձրանա

Հրդեհի տրված ազնվական քաղաքներեն:

(«Մահվան տեսիլք»)

Երևակայության ուժով մեծացած այս պատկերը ջարդերի, բռնության, հալածանքի և մորթված սերունդների պատմությունն է:

Հայրենիքի ողբերգության դրամատիկ պատկերն է «Ափ մը մոխիր, հայրենի տուն» բանաստեղծությունը: Անտուն, թափառական մարդը հեռվից ողբում է ավերված տունը, կորցրած ծննդավայրը, հայրենական պայծառ հիշատակները: Տունը դառնում է հայրենիքի խորհրդանշան.

Հայրենի՛ տուն, հավատա՛, որ մահես հետո,

Քո ավերակներովդ սևին վրա իմ հոգիս

Պիտի գա, որպես տատրակ մը տարագիր,

Իր դժբախտի երգն և արցունքը լալու...

Բայց ո՛վ պիտի բերե, ո՛վ պիտի բերե, ըսե՛,

Քու սրբազան մոխիրեդ ափ մը մոխիր,

Մահվանս օրը, իմ տրտում դագաղիս մեջ,

Հայրենիքս երգողի իմ աճյունին խառնելու...

Ափ մը մոխի՛ր աճյունիս հետ, Հայրենի՛ տուն,

Ափ մը մոխի՛ր քու մոխիրեդ, ո՛վ պիտի բերե

Քու Հիշատակե՛ղ, քու ցավե՛ղ, քու անցյալե՛ղ

Ափ մը մոխիր... իմ սրտիս վրան ցանելու...

Այս բանաստեղծությունը արտահայտում է հայ մարդու արտակարգ սերը և ներքին կապը իր հողի հետ:

1908 թ. վերադառնալով Պոլիս, Միամանթոն գրում է նոր բանաստեղծություններ. լույս են տեսնում «Կարմիր լուրեր բարեկամես» և «Հայրենի հրավեր» ժողովածուները:

Միամանթոյի ստեղծագործությունը, ողբերգական պատկերների հետ միասին, ունի նաև լավատեսական բովանդակություն: Նա գրել է հերոսական

բանաստեղծություններ, բարձրացրել հերոսներին, հողի պաշտպաններին: «Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ» բանաստեղծության մեջ, օրինակ, Միամանթոն արժարժում է այն միտքը, որ երգը պետք է արդար կովի տանի հերոսներին:

Հերոսական բանաստեղծություններից են կազմված «Դյուցազնորենը» և «Հոգեվարքի և հույսի ջահերի» մի մասը: «Հայրենի հրավերում» արդեն, համեմատաբար խաղաղ տարիներին (1910 թ.) Միամանթոն արժարժում է խոր մտքեր, հայ մարդիկ պետք է վերադառնան երկիր, ցրված հայությունը կարող է ապրել միայն հարազատ հողի վրա, աշխատանքով ու ստեղծարար ոգով: 1912 թ. գրած «Սուրբ Մեսրոպ» պոեմում Միամանթոն լավատեսությամբ երագում էր մի ազատ հայրենիք, ուր պետք է ծաղկեք, միտքն ու հոգին, խոր հավատ էր հայտնում հայրենիքի հավերժության մասին:

1913 թվականին Միամանթոն եղավ Կովկասում, ջերմ ընդունելություն գտնելով հայ գրողների և մտավորականների կողմից: Ոգևորված բանաստեղծն ապրում էր նոր երկունք: Բայց ճակատագիրը ողբերգականորեն ընդհատեց այդ մեծ կյանքը:

1915 թվականին նա գտնվում էր այն խմբի մեջ, որին, Անկարա քաղաքից ոչ հեռու մի ձորում, թուրք խուժանները տանջեցին վայրենաբար՝ զենքով, բրիչներով, քարերով, կացիններով:

Եզրակացություն: Հայ ժողովուրդը դարեր ի վեր ենթարկվել է կողոպուտի, թալանի: Մասնատվել են մեր հողերը, գոհվել մեր քաջ մարտիկները, տեղահանվել և անապատներն է տարվել մեր թշվառ ժողովուրդը: Որն է սրա հիմնական պատճառը. քրիստոնեության ընդունումից հետո արգելվեց այն, ինչը կարող էր հաճույք պատճառել մարդուն, քարոզվեց հնազանդություն, խոնարհություն: Հոգևորականների ջանքերով՝ հայը հրաժարվեց զենք բռնելուց, քանի որ դա հարիր չէր քրիստոնյային, նա պետք է ենթարկվեր իր տերերին: Հեթանոս ժամանակներում Հայաստանն ազատ ու անկախ էր, կարող էր առանց որևէ խոչընդոտի վայելել <<կյանք>>ը: Բայց հեթանոսական անցյալին անդրադառնալը չէր նշանակում, որ հեղինակները ցանկանում էին դառնալ հեթանոսներ կամ վերադառնալ պատմական անցյալ, նրանք ցանկանում էին այդ միջոցով հայ մարդու մեջ արթնացնել պայքարի ոգին, որ հայ մարդը, վերջապես, զենք վերցնել և պայքարել իր ազատության համար և ոչ թե իր ճակատագրին հնազանդ՝ դատապարտվել մահվան:

Ներկա օրերում այլ ի՛նչ սև քնար,

Սուր է հարկավոր կտրճի ձեռքին.

Արյո՛ւն ու կրա՛կ թշնամու վերա,

Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին. . .

Հեթանոս աստվածների ազատասիրություն, կենսասիրությունը պետք է բորբոքեին հայ ժողովրդի քնած ոգին, և նա պետք է ձգտեր ազատության, ապրել լիարժեք, վայելել կյանքի բոլոր բարիքները: Հայ ժողովուրդը պետք է արթնանա դարավոր թմբիրից, մի կողմ թողնի բոլոր տարաձայնություններ հանուն իր երկրի, իր զավակների, հանուն իր բարեկեցիկ ազատ ու անկախ ապագայի, դառնա մի բռունցք և աշխարհին ապացուցի, որ հայն անպարտ է, հզոր: Եվ ոչինչ և ոչ ոք չեն կարող կոտրել մի ժողովրդի ամուր կամքը, որը դարերի պատմության դաժան փորձությունների միջով անցնելով՝ հասել է 21-րդ դար և շարունակելու է իր գոյությունը ի հեճուկս մեր թշնամիների ու <<բարեկամների>>:

Օգտագործված գրականության ցանկ

Խ. Վարդանյան << Դ. Վարուժանը և <<գրական հեթանոսությունը>>>>, Երևան ԵՊՀ հրատարակչություն 2006

Ն. Նուշերվանյան <<Հեթանոսական գրական շարժում. կրոնների հակադրություն, թե նոր գեղագիտություն, Երևան ԵՊՀ հրատարակչություն 2014

Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծությունը, <<Արևիկ>> հրատարակչություն 1991թ..

Փանոսյան Ս., Լ. Շանթ, Երևան, 1992թ.

Բաֆֆի Երկերի ժողովածու, հ. 8, Երևան 1986,

<<Հ. լեզու և գրականություն>> ամսագիր 1.2011 և 3. 2013

<<Հ. լեզու և գրականություն>> դասագիրք 11-րդ դասարան 2010թ.